ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» մարտի 2026թ. N ՄՈ/237-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N878-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին վերապահված գործառույթների իրականացման նպատակով.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գործառույթներն իրականացնող փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հ ա վ ե լ վ ա ծ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2026 թվականի ապրիլի 27-ի
N ՄՈ/237-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏԻ

1. Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Փորձագետը ներգրավվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության մասնագետի գործառույթներն իրականացնելու նպատակով:
Փորձագետի կողմից իրականացվող գործառույթներն են՝

- Հավաքագրել տեղեկատվություն, Վարչության պետին ներկայացնել ամփոփ հաշվետվություններ.
- Ուսումնասիրել այլ մարմիններից ստացված տեղեկատվությունը.
- Ուսումնասիրել դիմումները, բողոքները, հարցումները և հավաքագրել տեղեկատվություն պատասխան գրությունների պատրաստման աշխատանքների համար.
- ծրագրերի կազմման աշխատանքներին.

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգավվում է 6 ամիս ժամկետով:

3. Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գործառույթների իրականացում:

4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը

Փորձագետը ներկայացնում է հաշվետվություն աշխատանքների իրականացման ավարտին:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ներկայացված հաշվետվության հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Աշխատանքների գնահատման արդյունքները ամփոփվում են հաշվետվության ներկայացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Աշխատանքը կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները

1. Գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
2. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

3. Բարձրագույն կրթություն:

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**